Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
նոյեմբերի 26-ի N 1404 - Ա որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մարտի 2015 թվականի N 259-Ա

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԿԱՄ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՎԹԱՐԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ԿԱՄ ՎԹԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԽԱՀԱՐՁԱԿ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՏՈՒ ԵՎ ՇՏԱՊ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԳՈՏՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով և «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «բ», «դ» ու «զ» կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի «ա» ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) «Հայկական ատոմային էլեկտրական» փակ բաժնետիրական ընկերությունում ճառագայթային կամ միջուկային վթարի սպառնալիքի կամ վթարի դեպքում նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման գոտու բնակչության ազդա-

բարման համակարգի գործունեության ապահովման միջոցառումների իրականացման ծրագիր-ժամանակացույցը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունում ճառագայթային կամ միջուկային վթարի սպառնալիքի կամ վթարի դեպքում շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտու բնակչության ազդարարման համակարգի գործունեության ապահովման միջոցառումների իրականացման ծրագիր-ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի:

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
մարտի 19-ի N 259 - Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր- Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Ց Ց

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԿԱՄ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՎԹԱՐԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ԿԱՄ ՎԹԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԽԱՀԱՐՁԱԿ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՏՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

NN ը/կ	Միջոցառումները	Պատասխանատու կատարողը (կատարողները)	Համակատարողը (համակատարողները)	Ժամկետը
1	2	3	4	5
1.	«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման գոտու ազդարարման համակարգի ստեղծման նախագծային աշխատանքների կատարման, սարքավորումների ձեռքբերման և մոնտաժային աշխատանքների իրականացման համար տեխնիկական առաջադրանքի մշակում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն		2015 թ. մայիս
2.	«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման գոտու ազդարարման համակարգի նախագծում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2015 թ. դեկտեմբեր
3.	Ազդարարման համակարգի հիմնական	ՀՀ էներգետիկայի և բնական		2016 թ.

	սարքավորումների ձեռքբերման համար ֆինանսական միջոցների ներգրավման վերաբերյալ առաջարկություն ներկայացնելը	պաշարների նախարարություն		մարտ
4.	Ազդարարման համակարգի հիմնական սարքավորումների գնման գործընթացի կազմակերպում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն		2017 թ. հունվար
5.	Ազդարարման համակարգի մոնտաժային աշխատանք-ների համակարգում, փորձարկում և շահագործման հանձնում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն		2017 թ. դեկտեմբեր
6.	«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման գոտու համայնքների ղեկավարների (համաձայնությամբ) հետ ազդարարման համակարգի պահպանման մասին պայմանագրերի կնքում	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	2017 թ. դեկտեմբեր
7.	Ազդարարման համակարգի փորձարկման ժամանակացույցի մշակում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն	2017 թ. դեկտեմբեր

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թվականի
մարտի 19-ի N 259 - Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր - Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԿԱՄ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՎԹԱՐԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ԿԱՄ ՎԹԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՇՏԱՊ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ (ՇՊՄՊ) ԳՈՏՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

NN ը/կ	Միջոցառումները	Պատասխանատու կատարողը (կատարողները)	Համակատարողը (համակատարողները)	Ժամկետը
1	2	3	4	5
1.	«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտու ազդարարման համակարգի ստեղծման նախագծային աշխատանքների կատարման, սարքավորումների ձեռքբերման և մոնտաժային աշխատանքների իրականացման համար տեխնիկական առաջադրանքի մշակում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2018 թ. դեկտեմբեր
2.	«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտու ազդարարման համակարգի նախագծում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2019 թ. հունիս
3.	Ազդարարման համակարգի հիմնական սարքավորումների ձեռքբերման համար ֆինանսական միջոցների ներգրավման վերաբերյալ	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն		2019 թ. օգոստոս

	առաջարկություն ներկայացնելը			
4.	Ազդարարման համակարգի հիմնական սարքավորումների գնման գործընթացի կազմակերպում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2019 թ. դեկտեմբեր
5.	Ազդարարման համակարգի մոնտաժային աշխատանքների համակարգում, փորձարկում և շահագործման հանձնում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2020 թ. հոկտեմբեր
6.	Շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտու համայնքների ղեկավարների (համաձայնությամբ) հետ պայմանագրերի կնքում ազդարարման համակարգի պահպանման մասին	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2020 թ. նոյեմբեր
7.	Ազդարարման համակարգի փորձարկման ժամանակացույցի մշակում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2020 թ. դեկտեմբեր

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ